ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐՏԱՇԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРМАВИРСКИЙ МАРЗ

ОБЩИНА АРТАШАР

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<< 07 >> << 02 >> 2020թ.

Գ.Արտաշար

Արմավիրի մարզի Արտաշար համայնքի ղեկավարի 2019 թվականի աշխատանքային գործունեության վերաբերյալ

Հաշվետու ժողովին մասնակցում էին ավագանու անդամները,գյուղապետարանի աշխատակիցները,դպրոցի ուսուցիչներ համայնքի բնակիչները Արմավիրի մարզետարանի ներկայացուցիչ Հովհաննես Հարությունյանը
Զեկույցով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ.Օհանյանը,որը ներկայացրեց 2019 թվականի ընթացքում իր կողմից կատարված աշխատանքները:Նաև նշեմ,որ 2019 թվականի ընթացքում ավագանին հրավիրել է 14 նիստ,որի ընթացքում քննարկվել են համայնքին հուզող հարցեր,որոնց վերաբերյալ ընդունված որոշումների մասին իրազեկվել է համայնքի բնակչությանը: Գյուղապետարանը ստացել է 124 շրջաբերական,ուղարկել 102 գրություն և քաղաքացի՝ներին է տրամադրել 187 տեղեկանք:

1.Գյուղատնտեսության բնագավառ.
Գարնանը՝ գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի ժամանակ, համայնքապետարան դիմած քաղաքացիներին տրամադրվել է դրամական օգնություն դիզվառելիք կամ անհրաժեշտ սերմացու ձեռք բերելու համար: Ոռոգման ջրով հողօգտագործողներին ապահովելու նպատակով, գյուղապետարանը իր անմիջական աջակցությունն է ցուցաբերել ՋՕԸ-ին անխափան ոռոգման ջրով հողօգտագործողներին ապահովելու համար. 2019 թվականին ոռոգման ջուրը ավելի հասանելի դարձնելու համար հորատվել է երկու նոր հորեր, բերքատվությունը կազմել է միջինից բարձր:2019թվականի սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է 100.3%, բյուջեյի կատարողականը 100,5 %:Համայնքապետարանը ունի 8 160 000 դրամ տնտեսած գումար,2020թ.նաատեսվում է կառուցել համայնքապետարանի շենք:

2.Կենցաղ սպասարկման բնագավառ.
2019 թվականի ընթացքում տնտեսությունների կենցաղային պայմանները բարելավելու նպատակով կատարվել է խմելու ջրի անխափան մատակարարում միջինը 18 ժամյա աշխատանքային ռեժիմով,վերանորոգվել է 80 գ/մ խմելու ջրագիծ,գյուղապետարանի և սանէպիդ կայանի կնքած պայմանագրի համաձայն պարբերաբար խմելու ջուրը ենթարկվել է ստուգումների:Վերակառուցվել է 350 /մ փողոցային լուսավորություն և մեկ փողոցներ ունեն լուսավորություն , կատարվել է ճանապարհների ավազապատում և

հարթեցում 46կ/մ:Կատարվում է աղբահանության աշխատանքներ, շաբաթական մեկ անգամ և համայնքում աղբի կուտակումներ չկան:

3.Մշակույթի և սպորտի բնագավառ.
Համայնքուի մշակույթի տանը գործում է սպորտային խմբակ ,պարապում են 24 երեխա: Գյուղապետարանի աջակցությամբ երեխաները մասնակցել են ՀՀ առաջնությանը և հաղթելով գրավել են բարձր տեղեր,իսկ Ուկրաինայում մասնակցել են առաջնությանը և մրցումներին մասնակցելու համար գյուղապետարանը ցուցաբերել է իր անմիջական աջակցությունը հոգացել է նրանց ճանապարհածախսը:Գյուղապետարանը սերտ համագործակցում է դպրոցի հետ,կազմակերպում է միջոցառումներ և միջոցառման մասնակից երեղաներին հանձնվում է նվերներ: Կանանց միձազգային օրվա կապակցությամբ թոշակառու կանանց և հաշմանդամ կանանց համար կազմակերպվել է տոնական միջոցառում և տոնի կապակցությամբ նրանց հանձնվել է նվերներ:Տարվում են աշխատանքներ մշակույթի և սպորտի զարգացման ուղղությամբ:

4.Սոցիալական բնագավառ.
Գյուղապետարանի անմիջական ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները,հաշմանդամները և թոշակառուները: 2019 թվականի սոցիալապես անապահով 22 ընտանիք դիմել է դրամական օգնության խնդրանքով և գյուղապետարանը չմերժելով նրանց խնդրանքը տվել է դրամական օգնություն ավագանու որոշմամբ:Գյուղապետարանի ջանքերի շնորհիվ <<Դիակոնյա>> բարեգործական կազմակերպության կողմից 29 ընտանիք ամսական մեկ փաթեթ ուրթ կիլոգրամ տարողությամբ սննդամթերք է ստանում,սոցիալապես անապահով 15 ընտանիք ստանում են ընտանեկան նպաստ,տարվում է աշխատանքներ բոլոր ուղություններով գյուղի սոցիալական վիճակը բարելավելու նպատակով:

5.Համայնքի հիմնախնդիրները՝
1.Խմելաջրի ցանցի նորացում
2.Ճանապարհների ասֆալտապատում
3.Մշակույթի տան վերանորոգում
4.Մանկապարտեզի շենքի կառուցում
5.Գյուղապետարանի շենքի կառուցում
6.Ոռոգման ցանցի կիսախողովակների կառուցում և խորքային հորերի վերագործարկում:

Արտաշարի գյուղապետարանը 2019 թվականին աշխատավարձի,սոց վճարումների և այլ ծառայությունների հետ կապված պարտքեր չունի:
Արտաշար համայնքի բնակիչները գյուղապետ՝
Մ.Օհանյանի գլխավորությամբ իրենց խորին երախտագիտությունն են հայտնում Արմանիրի մարզպետ՝ Հ.Մսքևոսյանին և խնդրում են աջակցել Արտաշար համայնքի հիմնախնդիրների լուծում գտնելու համար:

ԱՐՏԱՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՕՀԱՆՅԱՆ